

2017թ. չորրորդ եռամսյակի խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 1086 հարկ վճարողների ամփոփ ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ընդգրկված են Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2017թ.-ի ընթացքում սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 1086 հարկ վճարողների 2017 և 2016 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2017թ. չորրորդ եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 1570.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ աճելով 5 %:
2. Ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 20.1 %-ով և կազմել 465.4 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները աճել են 25.8 %-ով և կազմել 244.5 մլրդ դրամ:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2017թ.-ի չորրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 69.6 մլրդ. դրամ, որից ԱԱՀ-ն կազմել է 49.7 մլրդ դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի առումով 2017թ.-ի չորրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 139.7 մլրդ. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների կողմից 2017թ.-ի չորրորդ եռամսյակում վճարվել է հանրապետությունում հավաքագրված հարկային եկամուտների 57.1 %-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են 331 հարկային ստուգումներ, այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության 144 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 7.5 մլրդ. դրամի չափով:
7. 01.01.2018թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 160.8 մլրդ դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 105.8 մլրդ դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 12.2 մլրդ դրամ: Նշված ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների

գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 16.3 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 1.8 մլրդ դրամի չափով:

8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է է 3.8%-ով, իսկ մեկ աշխատողի միջին ամսական ԱՎՈՒՄ-ը աճել է 6.3%-ով և կազմել 238 հազար դրամ: